ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

2017թ. դեկտեմբերի 15 **N 217 - Ա**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՇՏԱՐԱԿԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՄԻ ՇԱՐՔ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով, <<Հանրակրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով, 1.16 կետի <<ա>> ենթակետով ՝ ***կարգադրում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակի տարածաշրջանի մի շարք դպրոցների ընդհանուր գործունեությունն ուսումնասիրելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ՝ համաձայն հավելվածի:

2. Աշխատանքային խմբին՝ սույն թվականի դեկտեմբերի 18-ից մինչև դեկտեմբերի 21-ը կատարել ուսումնասիրություններ և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետին:

Ա. ՍԻՄՈՆՅԱՆ

Հավելված

ՀՀ Արագածոտնի մարզպետի 2017թ.

դեկտեմբերի 15 -ի N 217 -Ա կարգադրության

Կազմ

ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակի տարածաշրջանի մի շարք հանրակրթական ուսումնական հաստատությունների ընդհանուր գործունեությունն ուսումնասիրող աշխատանքային խմբի

Աբգարյան Մամիկոն – ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ /խմբի ղեկավար/

Նալբանդյան Ռուզաննա - ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի պետ

Խերանյան Արմինե -- ՀՀ Արագածոտնի մարզպետի խորհրդական

Սարգսյան Սուրեն – ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի կրթության,մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի գլխավոր մասնագետ

Սիմոնյան Արմինե - ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի կրթության,մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի գլխավոր մասնագետ

Սարդարյան Ստալ - ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի գլխավոր մասնագետ

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի

աշխատակազմի ղեկավար **Հ.ԳԵՎՈՐԳՅԱՆ**